# ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РА
# MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA


Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76

**АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА**

**ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76**

**CJsC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after, V. A. FANARJIAN**

**76 FANARJIAN str. YEREVAN, KANAKER, ARMENIA**


______ № 01/10-20

«31» 01 2014


Հեռ.՝ (3741) 28-69-62
Ֆաքս՝ (3741) 28-69-22


<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15>> ծածկագրով Շրջանակային

համաձայնագիր կնքած բոլոր հնարավոր Մասնակիցներին

«ՈՒԱԿ-ՇՀԱՊՁՊ-11/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԱՆ <<Վ. Ա. Ֆանարջյանի անվ. ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ–ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում եմ Ձեզ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԱՆ <<Վ. Ա. Ֆանարջյանի անվ. ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ ք.Երևան Ֆանարջյան 76շ. հասցեով, հաշվապահություն, մինչև 2014 թ. փետրվարի 11-ի ժամը $15^{00}$ -ն:

Հայտերը կբացվեն ՀՀ ԱՆ <<Վ. Ա. Ֆանարջյանի անվ. ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ի շենքում, ք.Երևան Ֆանարջյան 76շ. հասցեով 2014թ. փետրվարի 11-ին, ժամը $15^{00}$-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև Կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով

Տնօրեն՝ Հայրապետ Գալստյան